ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2025թ. թիվ 774-Ա

Մ.ԷՏԻԲԱՐՅԱՆԻՆ «ՎԱՀԱԳՆԻԻ Մ.ՔՈՉԻՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 728-Ա որոշումը և հաշվի առնելով «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Մ.Էտիբարյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մարիամ Սարգսի Էտիբարյանին 2025 թվականի նոյեմբերի 27-ից նշանակել «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ մինչև մրցույթի արդյունքում տնօրենի նշանակումը:

2. «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

«Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Մ.Էտիբարյանին տալ լրավճար «Վահագնիի Մ.Քոչինյանի անվան առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 27-ից:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2025-11-27 18:12:14 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 27
ք.Վանաձոր